ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«29» «հոկտեմբերի» 2024 թ. № 437-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 897-Ն որոշման հավելվածի 4-րդ կետով և 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1072-Ն որոշման հավելվածի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 20-րդ կետերով, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ «Հայանտառ» ՊՈԱԿ)տնօրենի 2025 թվականի հոկտեմբերի 4-ի Ն/31.2.2/13302 գրությամբ ներկայացված նյութերը (լրացված հատատեղի հաշվեգնահատման ցուցակները, հատատեղի անձնագրերը և քարտեզ-սխեմաները).

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառներում 2025 թվականի հատատեղերի հատկացման աշխատանքների կատարման վերաբերյալ ընտրանքային կարգով ուսումնասիրություններ (այսուհետ՝ ուսումնասիրություն) կատարելու նպատակով՝ ստեղծել մասնագիտական հանձնախումբ (այսուհետ՝ հանձնախումբ) և հաստատել դրա կազմը, համաձայն հավելվածի:

2. Հանձնախումբն աշխատանքներն իրականացնելիս հիմք է ընդունում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1072-Ն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N897-Ն որոշումների դրույթները:

3. Հանձնախումբն ուսումնասիրություններն իրականացնում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերը, որոնց անտառակառավարման պլանները բացակայում են կամ ժամկետանց են՝ ուսումնասիրություններն իրականացվում են առաջնահերթորեն:

4. Հանձնախմբի ղեկավար Դ. Աբովյանին՝

1) Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կազմված արձանագրությունները (հետազոտման ակտերը) ուսումնասիրության ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն,

2) հանձնախմբի աշխատանքներին ներգրավել նաև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի համապատասխան մասնագետներին:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյանին:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

10/29/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«29» հոկտեմբերի 2024թ.

ք. Երևան

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
2024 թվականի հոկտեմբերի «29» -ի № 437-Լ հրամանի

ԿԱԶՄ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ

Դավիթ Աբովյան	«Հայանտառ» ՊՈԱԿ՝ անտառների և անտառային հողերի օգտագործման, վերլուծության բաժնի պետ (հանձնախմբի ղեկավար),
Ավետիք Ավետիսյան	«Հայանտառ» ՊՈԱԿ՝ անտառների և անտառային հողերի օգտագործման, վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ,
Արամ Եղիազարյան	«Հայանտառ» ՊՈԱԿ՝ անտառների և անտառային հողերի օգտագործման, վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ,
Նարեկ Քոչարյան	Շրջակա միջավայրի նախարարության անտառային քաղաքականության վարչության մասնագետ: